



Ր Ա Ն Ը - Բ Ե Ն Ը Ս Ի Ր Ե Մ Ը Ն

ՀԱՎՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ՅԱՆՑ

ՔԱՐՈՉ՝ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ՎԿԱ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԶՈՎԵՑԻՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

«Բայց արդարների հոգիներն Աստծու ձեռքին
 են, և մահը չի մոտենալու նրանց» /Իմաստ. Գ 1/:

Եթե իմացական հոգու անմահության մասին խոսելու լինեցք, /այա/՝ բոլոր հոգիները, ըստ Աստվածային շնորհի, անմահ են: Ուստի Արիստոտելը երկինքը և իմացական հոգին հավիտենական է անվանում: Օգոստինոսն ասում է, թե մարդու հոգին անմարմին է ըստ Աստծու պատկերի: Որոգիներն ասում է, թե հոգին հավիտենական է և անմահ: Դամասկացին ասում է, թե /այն/ իմացական կամքով և անձնիշխանությամբ զարդարված է: Նյուսացին ասում է. «/Հոգին/ ընդունակ է իմաստությամբ, առաքինի շնորհներից, Աստծուն տեսնելու երանությանը և բոլոր բարի գործերին»: Սուրբ Բարսեղն ասում է. «Բոլոր կենդանիների տիրող և իշխող»: Կոռնելիոսն ասում է. «Ինչպես որ բոլոր առարկաները գերազանցապես կան Աստծու մեջ, այնպես էլ մարդու մեջ, որովհետև մարդը հոգով է ամբողջը կրող հանդիսանում, որ բոլոր առարկաների պատկերները իր մեջ ձևավորում է, ինչպես հայելու մեջ»: Արիստոտելն ասում է. «Մարդու հոգին ևս բնությամբ անենակարող է, ինչպես Աստված, թեպետ ամեն ինչ չէ, որ կարող է կատարել, ինչպես Աստված», որովհետև /մարդը/, ըստ Դավիթ փիլիսոփայի, չի կարող մատնեթով շոշափել երկինքը և ըստ Նյուսացու՝ չի կարող իր ստվերից փախչել:

Այլև հոգին է կառավարում մարմինը և ամբողջը ամփոփում իր մեջ, ինչպես Աստված ամբողջացնում է աշխարհը իր բոլոր մասերով /հանդերձ/: Աստված, որպես Հայր՝ իմացական միտքն է, որպես Բրդի՝ մտքի ծնունդ խոսք, և որպես Սուրբ Հոգի՝ կամք և բարության բխում: Այսպես և մարդու հոգին ճանաչում է իրեն և ուրիշին, ըստ մտքի ծնում է խոսք և կամքով անձնիշխան է:

Արդ, թեպետ ըստ վերը նշվածի համեմատվում են բոլոր մարդկանց հոգիները, բայց ոչ բոլոր հոգիներն /են համեմատվում/ ըստ շնորհի և ըստ հանդերձայ երանության, որի համար էլ՝ «Բոլոր արդարների հոգիներն Աստծու ձեռքում են» /Իմաստ. Գ 1/, որոնք ազատ են դժոխքի հավիտենական տանջանքից, որը երկրորդ մահ է համարվում: Եկեղեցին էլ, Սուրբ Գրքից այս հաստիքը հարմար գտնելով, շատ անգամ ընթերցում է ի պատիվ մարտիրոսների, որոնց թվում և ի պատիվ սրբոց Վարդանանց:

Ա. Եթե մահը հոգու բաժանումն է մարմնից, /Քրիստոսի/ վկաների հոգիները բաժանումից հետո միանում են Աստծուն, այսինքն Աստծու ձեռքում են գտնվում, որովհետև Աստված իր գործությամբ պահում է նրանց հոգիները, որպեսզի հավիտյան չմահանան: Թեպետ դատապարտվածների հոգիներն անմահ են, սակայն ոչ թե երանության մեջ են, այլ թշվառության, ոչ թե Արքաբանի գոգումն

են, այլ թաղված են դժոխքում: «Իսկ ոչ ոք նախասահմանվածներին իմ ձեռքից չի կարող հափշտակել»,-ասում է Տերը /Հովհ. Ժ 28/:

Բ. Մարտիրոսների կողմից Քրիստոսի համար կրած մահը նրանց չի չարչարում, այլ լցնում է հաճությամբ: «Ուրախանում են Քրիստոսի համար իմ կրած նեղությունների վրա և չեմ զարհուրում»: Ուստի Աստվազգայացը* ուրախությամբ էր գնում դեպի առյուծների ժանիքը, կոտորածը, մահը: «Գազանները իմ վրա էին գայիս, -ասում էր,- և ես միայն Քրիստոսի համար էի ուրախանում»: Եվ նրա համար հոգու ելնելը մարմնից առանց ցավի էր: Ուստի Սուրբ Իլարիոնը մահվան ժամանակ մխիթարում էր մարմնին և արիացնում հոգին՝ ասելով. «Դո՛ւրս եկ, հոգի, դո՛ւրս եկ, ահա ութսուն տարի է, որ ծառայում ես Աստծուն, և դեռ երկնչո՞ւմ ես մահվանից»: Նույնն է ասվում /Բաբելոնի/ երեք մանուկների /պարագային/, երբ հրեշտակը իջավ-կանգնեց Ազարիայի կողքին, թոթափեց հուրը նրանց վրայից և «կրակի բոցն ամենեկին չէր տանջում նրանց» /Դան. Գ 49-50/:

Աղամն ու Եվան մերկ էին և Աստծու առաջ կանգնելիս չէին ամաչում, որովհետև ամաչեցնող մեղքեր չուներին: Այսպես էլ Վարդանանց. արևապաշտությունը, /որպես/ մեղքերի պատրանք իրենց աչքի առաջ ունենալով, ինչպես սուգի ժամանակ՝ մեղքերը ստուգապես և կամավոր զղջմամբ ապաշխարեցին և /դրանցից/ մաքրվեցին, և հետո սկսեցին պատերազմ մղել և հաղթող դուրս եկան սատանայի որոգայթներից, ինչպես երգում է ասվում. «Հակառակորդների դեմ արիացած՝ քաջությամբ, խաբեության վրեժը լուծելու /համար/, այլ դավանանքներից պատասխանելու մեջ իմաստուններ և ամբարիշտների /նկատմամբ/ հատուցմամբ արդարադատներ, /Քրիստոսի կողմից պսակված զինվորները/» /Ըարակոնց, Վաղարշապատ, 1888, էջ 431/:

Գ. Արդարների հոգիները կովի ժամանակ Աստծու ձեռքում են, և սատանան՝ մահ բերողը, չի կարող մոտենալ նրանց. «Ահա ամեն ինչ տալիս եմ քո ձեռքը, բայց նրա հոգուն չդիպչես» /Հոր Բ 6/: Ինչպես Աստված ժանգր և կապարը կրակին է մատնում և նրան պատվիրում, որ ոսկու կշռին ու պայծառությանը չդիպչի: Եվ /Աստված/ նրանց փորձեց որպես ոսկին քուրայի մեջ:

Այսպես. Աստված փորձեց Սուրբ Վարդանանց՝ կրակապաշտ Հազկերտ արքայի ձեռքը տալով նրանց ունեցվածքն ու հարստությունը, այլև ժամանակավոր կյանքը, և թույլ չտվեց մերձենալ նրանց հոգիներին, որովհետև նրանց հոգիները իր ձեռքում էին, ովքեր մարմնով և արյամբ մարտնչեցին չարի դեմ: Մարմնով վիրավորվածները մահացու վիրավորեցին Բելիարին /հմտ. Բ կոր. Զ 15/: Այստեղ պատշաճում է. «Հզոր մարդիկ, որոնք խաղում էին կրակի հետ... կխառնվեց իրար հրապարակներում: Նրանց տեսքը կրակե լամպերի նման է, և նրանք փայլակի պես այս ու այն կողմ են գնում...» /Նավում Բ 3-4/:

Սուկրատեսը Պողոսի մասին ասում է, թե «Սատանայի հետ ինչպես մի թռչունի հետ է խաղում /Հոր Խ 24/, և բազմիցս սաստելով նրան՝ հալածված հեռացնում էր, և նրա գլուխը ոտքերի տակ ջախջախում»:

Դ. Մեր սուրբ վկաները վախկոտներ չէին, այլ առաքելական կուռ զենքերով զինված մտան քաջության մեծ հանդեսի մեջ /Եփես. Զ 13/, որովհետև Աստված ևս նոր տուն կառուցողներին, այգի .տնկողներին, թուլասիրտներին ու

* Նկատի ունի Սուրբ Իզնատիոս Աստվածազգայացին:

վախկոտներին թույլ չէր տալիս պատերազմ գնալ /Բ Օրենք Ի 5-9/: Մեր վկաները գիտեին, որ մարմնի երկրավոր շինվածքը քանդելու հետ մեկտեղ Աստծու աճձեռագործ շինվածքը ունեն հավիտենական երկօրում: Եվ /իրենց/ ընտանիքները այդու պես հոգալով /«Կինդ պիտի լինի վայելուչ որթատունկի աես» /Սաղմ. ԺԻԷ 3/՝ նրանց, որպես հրեշտակներին հավասար քույրեր են ունենալու երկնքում:

Եվ իմանալով, որ իրենց պատերազմը Աստված է մղում, անվարան քաջությանը արհամարհեցին մահը: Ըստ Արիստոտելի. «Վիշտ կրելու ժամանակ անվեհեր եղան և բռնավորի սպառնալիքները արհամարհեցին՝ գերադասելով լավ ձևով մեռնելը, քան վատ ձևով ապրելը»: Այսպես էին ասում Մակարայեցի վկաները. «Քաջությանը մեռնենք և ամուսն ու հոգի ժառանգենք: Տեր Աստված տեսնում է, թե ինչպես ենք չարչարվում մեր այս պայքարում, Նա իր գթասրտությունը ցույց կտա իր ծառայողի նկատմամբ» /Բ Մակար. Է 5-6/:

Մակարայեցիները /Հին/ ուխտի, իսկ Վարդանանք Հիսուս Քրիստոսի Ավետարանի և նրա հարսի՝ Եկեղեցու սիրո համար իրենց ամենը մահվան մատնեցին: /Եվ/ թող ոչ ոք չասի, թե սրանք ինչ-որ ժամանակ թիկունքները /դեպի թշնամի/ դարձրեցին: Ասենք, որ թեև ընթիշները ախտամի հետ պայքարելիս երբեմն գետին են զգվում, բայց այնուամենայնիվ՝ հաղթող են դուրս գալիս: /Այս նմանողությանը էլ/ Հեսուն, զորքով կեղծ փախուստի ժամանակ հետ շրջվեց՝ թշնամուն հայածելու համար. «Դարանակալները մտան Գայի և /հրով/ այրեցին /այն/» /Հեսու Ը 19/: Մի իմաստուն փախուստ էր այս, որովհետև թագավորը այն զինվորին է առավել սիրում, որը խուսափելով մարտից՝ հետո հետ է դառնում և ախտամից մահվան մատնում, որովհետև նա, ով թիկունքը ցույց չտվեց /հակառակորդին/՝ հաղթանակ ձեռք չբերեց: Մայրը հիվանդացած և ապա առողջացած որդուն առավել է սիրում, քան առողջին: Կամ էլ, այգեպանը /մախկնուհու/ փշոտ և /այժմ/ պտղաբերող այգին առավել է սիրում, քան փշոտ ու անպտղաբեր չեղածը: Եվ կրտսեր որդին ասաց. «Այգի չեմ գնում», սակայն զղջալով՝ զնաց, և /ավագ որդին/, որ ասաց. «Գնում եմ»՝ զգնաց /Մտթ. ԻԱ 28-31/:

Այսպես է, կարծես թե, այս վկաների համար ևս, որովհետև ովքեր անգիտությանը թիկունքները /թշնամուն/ դարձրին, գիտությանը հետ դառնալով՝ պատրանքները պատրանքով քանդեցին և հաղթեցին:

Ե. Մեր վկաների հոգիները Աստծու ձեռքում էին, ինչպես մանուկը մոր և սնուցչի զրկում: «Ես Եփրեմիմ վերցրի իմ բազուկների վրա» /Օսեե. ԺԱ 3/: «Հովիվը իր գառներին կրելու է իր ծոցում» /Եսայի Խ 11/, «Ինչպես մատանին է մատին և կնիքը սրտին /դրված/» /Երգ. Ը 6/: Կամ ինչպես /մի/ թուղթ, որ գրչի ձեռքում է, որ ինչ կամենա, կարող է նրա վրա գրել. «Ահա ձեռքերի աստիճանը գծագրեցի քո պարիսպը» /Եսայի ԽԹ 16/:

Այսպես. խաչյալ Քրիստոսն իր ձեռքով գրեց իր ընտրյալների /ամուսները/, ոչ թե գամերով, այլ իր արյան թանաքով, որպեսզի գերագույն սերը նրանց մեջ կնքեր և իր շնորհներով նրանց հաստատեր: Կոռնելիոսն ասում է. «Ինչպես հիվանդն է հմուտ բժիշկի ձեռքում, այնպես էլ արդարների հոգիները գորավոր Աստծու ձեռքում են»: «Տիրոջ ձեռքն ինձ վրա գորավոր եղավ» /Եզկ. Գ 15/:

Դարձյալ, ինչպես շուշանները, վարդերը և /մնացած/ ծաղիկներն են բուրրով հոտոտողի ձեռքում, այսպես և Աստծու ձեռքում /գտնվող/ արդարների հոգիները Նրա հոտոտելիքներիմ անուշահոտությամբ են բուրրով: Ղևոնդյանց /քահանաների/ մասին է ասված, թե Ձեր արյան հեղումից ամուշ հոտ բուրեց երկնքում, « և Տեր Աստված հոտոտեց ամուշ բուրբը » /ԾճճԳ. Ը 21/: Կամ էլ՝ ինչպես կավը բրուտի ձեռքում, որ ինչպես կամենում, /այնպես էլ/ ձևավորում ու հրով թրծում է, կամ՝ ինչպես սուրը զինվորի ձեռքում, որով ինչպես կամենում՝ պատերազմում է:

« Ընդունիր այս սուրբ սուսերն իբրև Տիրոջ կողմից տրված պարգև, որովհետև դրանով են ոչնչացնելու բոլոր թշմամիներին » / Բ Մակ. ԺԵ 16/:

Ուրեմն մեր քաջ գորավար Քրիստոսը իր ձեռքն առավ Սուրբ Վարդանանց և նրանցով համարուգն սատանային պարտության մատնեց: Սուկրատեսն ասում է. « Քո պատերազմի մեջ Տերն է մտնում, պատերազմում և հաղթությունը քեզ է վերագրում: Քո մարտը Աստծու մարտն է, քո պատերազմը՝ Քրիստոսի պատերազմը: Ինչի՞ց են վախենում, վերցրու քո զենքը և գնա մարտնչելու, քո պատերազմը Նա է մղում, Ով պարտվել չգիտի »:

Ջ. Մահը նրանց չմոտեցավ, որովհետև նահատակների հոգիները ամմահ պահված են Աստծու ձեռքում, թեպետ անզգամների այքին մահացած են թվում, որովհետև մահվամբ ննջեցին, և ոչ թե մահացան. « Իսկ արդ, նրանք, որ ննջեցին ի Քրիստոս, կորա՞ն արդյոք » /Ա. Կոր. ԺԵ 18/: « Երանի այն մեռելներին, որոնք... ննջեցին ի Տեր, որովհետև հանգստացան իրենց տքնությունից » /Հայտ. ԺԴ 13/: Որ սերմերի անանողությամբ՝ ձմռանը մեռնում են, իսկ գարնանը՝ բազմապատիկ պտուղներով հարություն առնում:

Քանի որ բռնավորների տանջանքները մինչև նրանց հոգիներին չեն հասնում, /որովհետև/ ընկույզի կեղևն էին կտրում և ոչ թե միջուկին վնասում: Անաքսարքոս փիլիսոփան կրեոտացի բռնավորից սանդահարվելու ժամանակ ասում էր. « Սանդահարի՛ր, սանդահարի՛ր այդ Անաքսարքոսի պարկը, քանի որ ոչ ոք չի կարող Անաքսարքոսին սանդահարել »: Սուրբ Հակոբն ասում է. « Երկաթը որքան մուրճով ծեծվում է, չի վնասվում, այլ ավելի է ամրանում »: Դարձյալ, թեպետև մահը զարհուրելիների մեջ ամենազարհուրելին է, սակայն քաջասիրտ վկաների համար ծաղր ու կատակ էր թվում, որովհետև դեպի մահն էին գնում որպես հարսանիքի ուրախության, և այն քրիստոնյաների համար կատակ է, « Ո՛վ մահ, քո մահկանացուն կնքվեց » /Ռմմտ. Ա. Կորնթ. ԺԵ 54/:

Դարձյալ գեհեմի տանջանքների /մասին/, որը երկրորդ մահն է և չէր մոտենում վկաներին, չէր մոտենում նաև խղճմտանքի չար տանջանքը, որն անքուն որդ է համարվում, որի մասին Բեռնարդոսն ասում է. « Վախենում են խոցող որդից և կենդանի մահից: Վախենում են ընկնել մահը կենդանացնողի և կյանքը մահացնողի ձեռքը »: Սա է երկրորդ մահը, որ սպանելով չի սպանում, որպեսզի հավիտյան չմեռնեն. « Մարդիկ մահը պիտի փնտրեն, բայց չպիտի գտնեն... » /Հայտ. Թ՝ 8/: Եվ արդարները հավիտյան կմանան:

Այսպիսի կյանքը գերադասեցին մեր վկաները. մեռելուտի մորթին հեռու գցեցին, կեղևը կտրեցին և մարմնի բաժուից դուրս եկան, աքսորի վերջին հասան, նավահանգիստ ժամանեցին, հաղթության պսակը հանդիսադրից ընդունեցին, բեռի ծանրությունը թոթափեցին, մարմնից՝ կատաղած երկվարից ցած իջան, քայքայիչ տոնից ազատվեցին, հիվանդություններից վերջ տվեցին, ազատվեցին

նավաբեկության որոգայթներին, բնությանը արժանին հատուցեցին և նախնական /վիճակին/ ու վերին փառքին վերադարձան:

Է. /վարդանանք, որ/ պարսից հրապաշտ ամբարիշտների աչքին մեռած էին երևում, հոգով էլ մեռած կարծվեցին, քայց մեր վկաների հույսը յի էր անմահությանը, որովհետև սակավ ինչ տանջվելով մեծ երանությունը գտան հավիտենական կյանքի: Կապարը տվեցին և ոսկի առան, անգագամների աչքին մեռան և Աստծու աչքում կենդանի մնացին, որովհետև Աստծու քարեկամները չեն մահանում, այլ մնջում են, երբ քում է տալիս իր սիրելիների: Մեր քարեկամ Ղազարոսը ևս մնջեց:

Ջանանք, որ մեճ ևս նրանց մահով մահանանք և հավիտենական կյանքը վաստակենք: Բաղասմի մման ասենք. «Մեռնենք արդար մարդկանց հետ» /Թվոց ԻԳ 10/ և չասենք՝ Սամսոնի մման, «Թող մեռնեմ այս ալլազգիների հետ» /Ղևտ. ԺԶ 30/: Սամսոնի մման էլ պիղծ Սյուրյաց վասակ իշխանն ասաց, որ Սեբաստիայի քառասուն մանուկներից մեկի օրինակով դուրս եկավ լճից և մտավ կորսության մատնող տաք տունը և զրկվեց երկու կյանքերից էլ: Մանիքենոսի մմանողությամբ էլ կենդանի տիկ համվեց և չարաչար /մահով/ մեռավ, և սա նրա համար հավիտենական մահ եղավ, որ է ըստ Հոգու:

Իսկ հազար երեսունվեց վկաները պատվական մահն ընդունեցին Քրիստոսի համար և Նրա հետ միասին թագավորում են երկնքում, Ում՝ Հոր և Սուրբ Հոգու հետ միասին փառք հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

Գրաբարից թարգմանեց՝

ՀՐԱՅՐ ԳՊԻՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ